ՆՈՐ-ԴԱՐ

№ 42 ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Հինգշաբթի, 11 Մարտի 1893 Հինգշաբթի, 11 Մարտի ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 42

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատուկ՝ 5 կոպէկ։ Յատուկ գրւում են Թիֆլիսում մինիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9 ից մինչեւ 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն ժողովուրդից։ Յայտարարութիւնների բառին 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Կարևոր է, որ իմանանք։

Քրոնիկոն.—Ներք. գործ. մինիստր. կաթգադրութիւնը խոլերայի մասին։ Ախալքալաքից։ Գատզիւղի հրդեհի մասին։ Բաթումից։ Ղարսայեազից։ Զագախից։ Գոտ-Հետազ. կառավարիչ Բօգուցկինի այցելութիւնը Թագմազիրեանի վրայ։

Սովորութիւններ Թիւրքահայաստանում։

Մարգուս կեանքի սահմանը։

Քաղաքական.—Լուրեր։

Բանասիրական.—Լուսաւորութեան կենդրոնը։

Հեռագիրներ։

Տեղական։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 10 մարտի, 1893 թ.

ԿԱՐԵՒՈՐ Է ՈՐ ԻՄԱՆԱՆ.

Վերջին տարիներս հետզհետէ բարեգործական և այլ օգտաւէտ ընկերութիւնների կամ երեսփոխանական, եկեղեցական ընտրութիւններ յաճախակի կրկնուելով, մի կարգ մարդիկ ընտրութիւններ անելը շատ սիրեցին և ընտրութիւններով զբաղուելը՝ իրենց մասնաւոր պարապմունքը չինեցին։

Այդ երևոյթը լաւ ինքեան նշանակութիւն չպիտի ունենար, եթէ զեղծումներ, անկանոնութիւններ, կարելի է և ասել, բռնութիւններ սովորական չդառնային մեր զանազան հաստատութիւնների ժողովներում։

Մեր ազգային հաստատութիւն-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԵՆԴՐՈՆԸ *)

Դ.

ԱՒԵՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Անցան մի քանի ամիսներ։ Վահան Սաքեանը հաւատարիմ մնալով իւր խոստմանը, բոլոր այդ ժամանակ հեռու պահեց իրեն ազգային շրջաններից և մեծ ուշադրութեամբ նուիրուեց իւր ծառայութեանը։

Թորոսեանը կամենալով օգնել իւր ազգակցին և նրանից մի հաւատարիմ ծառայող պատրաստել իւր համար, բաւարար առիթ նշանակից նրան և պատուիրից հաշուապահին սովորեցնել նրան իւր ծառայութեան վերաբերեալ գիտելիքները։

Կարճ ժամանակի մէջ Վահանը աւարտեց հաշուապահութիւնը, ծանօթացաւ Թորոսեանի ընթացիք գործերի հետ, ընտելացաւ առևտրական աշխարհի կարգ ու կանոններին և շնորհքով ու հմտութեամբ իւր պաշտօնը վարելով գրաւեց Թորոսեանի սէրը և իւր պաշտօնակիցների յարգանքը։

Բայց և այնպէս, երիտասարդը իւր գործունէութեան այդ նոր ասպարէզը չկարողացաւ սիրել, որովհետև նա չէր գտաւ այդտեղ մի բան, որ կարողանար իւր սիրտը գրաւել, միտքը կերակրել կամ հոգին պարարել։ Իւր շրջապատը դիտելով և որոշ գիտակ-

*) Տես «Նոր-Դար» № 35։

ները բարգաւաճումն հենց ի նպատակ առած, պէտք է մենք հրաւիրենք ընդհանուրի ուշադրութիւնը այդ բանի վրայ։

Իմանալով որ իւրաքանչիւր ժողովում մի որ է գործի կամ խնդրի մասին տևորարար վճռաբանութիւն է բացւում և վերջ ի վերջոյ գործը որոշւում է, խնդիրը լուծւում է՝ ձայների մեծամասնութեամբ — կան մարդիկ, որոնք կարծում են թէ ամեն բան վերջացաւ, եթէ մի գործի կամ մի խնդրի համար ձայների մեծամասնութիւնը ապահովուած է։

Եւ ձայների մեծամասնութիւն կազմելու համար ոչ խելք, ոչ գիտութիւն, ոչ համարումն և ոչ էլ մի առանձին աշխատութիւն է հարկաւոր. պէտք է միայն փող, որպէս զի կարելի լինի անխտիր ամեն տեսակ մարդկանց մղոնել ժողովները իբրև անդամներ — և ձայների մեծամասնութիւնը պատրաստ է։

Թէ ինչ արժէք ունեն հաւաքած մարդկանց կարծիքները և թէ այդպիսի պատահական մարդկանց որոշումներն ինչ օգուտ կարող են բերել — այդ մասին չէ մեր խօսքը։

Խնդիրն այն է, որ մի որ և է հաստատութեան կամ ընկերութեան ժողովում ձայների մեծամասնութեամբ եղած որոշումը միմիայն այն ժամանակ օրինական

ցութեան գալով նա տեսաւ իրեն ամբողջ ամայութեան մէջ, հեռու սիրած ու գուրգուրած նպատակներից....

Ձմռարիտ է, նրա դրութիւնը այժմ աւելի ապահով էր քան առաջ. նա վաստակում էր իւր հացը արդար քրտինքով, կարօտութիւնը այլ ևս չէր սպառնում նրան, նա հետզհետէ ծանօթանում էր առևտրական աշխարհի նշանաւոր մարդկանց հետ, իսկ այդ ծանօթութիւնը կարող էր ապահովել նրա ապագայ բաղդի յաջողութիւնը, այսու ամենայնիւ այս բոլոր առաւելութիւնները չէին փակում այն անջրպետը, որ իւր սիրած, գաղափարական աշխարհը բաժանում էր առևտրական նիւթապաշտ աշխարհից, որ օր ըստ օրէ տեսնը գիտակցութեան բերելով իրեն՝ թոյլ չէր տալիս նրան սիրել այդ ասպարէզը։

Արդարև, գաղափարական աշխարհի մէջ էլ նա դեռ գրաւիչ ու սիրելի ոչինչ չէր տեսել։ Առաջին անգամից իսկ այդտեղ չրջապատել էին նրան ստութիւն, կեղծիք, խաբեբայութիւն և այլն, բայց նա համոզուած էր, որ դա իւր երևակայած աշխարհը չէր հոգած, որ նա սխալուել էր խարեբաների մի չրջան մանելով և այդ չրջանը գրական ու ազգային աշխարհ ճանաչելով։ Նա հաւատում էր, որ իւր երևակայած գաղափարական աշխարհը կայ, գոյութիւն ունի և որ ինքը մի օր կարող է հանդիպել նրան։ Նա հաւատում էր, որ այնտեղ ապրում ու գործում են դեռ ազնիւ և առաքինի մարդիկ, որոնց հետ մի օր նա կարող

է ծանօթանալ....

Իսկ ինչ առևտրական աշխարհին էր վերաբերում, նա այժմ արդէն իւր աչքի առջևն էր։ Երիտասարդը նրան տեսնում, քննում, ուսումնասիրում էր, և որքան որ աւելի ժամերնում ու լիափանցում էր նրա էութեան և գաղտնիքներին, այնքան աւելի հակակրում և արհամարհում էր նրանից։

Եւ իրաւ, ինչ ձգտում և ինչ աշխատասիրութիւն ունէր գործատէր առևտրականը և ինչ՝ նրա ծառայողները։

Առաջինը մտածում էր չարունակ փող վաստակելու, գանձ դիզելու վրայ։ Այդ նպատակին հասնելու համար նա ոչ միջոցների մէջ էր խարխափում գնում և ոչ աշխատութեան ծանրութիւնից էր փախչում։ Վաղ առաւօտից սկսած մինչև մութ երեկոյ անընդհատ գործում ու տքնում էր և իւր հետ միասին աշխատեցնում ստորադրեալներին։ Օրերին յաջորդում էին շաբաթները և ամիսներին՝ տարիները. առևտրականի կեանքը բոլոր այդ ժամանակ հոսում էր միատեսակ։ Փող, հաշիւ և շահ. ահա միակ առանցքը, որի շուրջը պտտում էին նրա խելքն ու միտքը, խօսքն ու զրոյցը, սիրտը և հոգին։ Առևտրական մարդուն հասարակական խնդիրները չէին գրաւում, ազգային նորութիւնները չէին հետաքրքրում, գաղափարական մտքերը չէին ոգևորում... Այդ բաների վրայ նա ծաղրով կամ արհամարհանքով էր նայում. իսկ երբ տեսնում էր, որ դրանցով զբաղւում են իւր չափած

մարդիկ, նա նրանից հոյս էր տալիս գծուծ Ճանապարհներով, փախչում էր բարեգործական նպատակով փող հանգանակող մարդուց, երես էր դարձնում ազգային գործի համար՝ իւր օգնութեանը դիմող բարեկամից, անարգանքով հեռացնում էր կարօտեալին, նախատում էր ազգասէր տիպարութիւնը, ծաղրում էր բաղդից հալածուածին... և իւր այս տմարդութիւնն ու անգթութիւնը արդարացնելու համար, իմաստակութեամբ հերքում էր հասարակական չահերի մասին մտածելու ու գործելու կարևորութիւնը, առարկելով թէ՝ այդ Ճանապարհով սոված թողնում են մարդկանց անգործութեան և ծուլութեան և մեռցնում են նրանց մէջ ինքնօգնութեան զգացումն ու գաղափարը։

Իսկ թէ ինքը ինչ նպատակով էր ոսկի դիզում, որ ապագայի մասին էր աշխատում, դրա համար նա ոչ օրէն հաշիւ չէր տալիս և համոզուած էր, որ իրանից այդտեղ հաշիւ պահանջելու էլ երաւունք չունին, որովհետև նա աշխարհում ապրում էր իւր՝ և ոչ թէ ուրիշների համար։

Ի հարկէ է, բոլոր առևտրականները միատեսակ չէին, ինչպէս որ պատիւի մէջ բոլոր ծառերը մի հասակ չունին, կամ ծառի վրայ բոլոր պտուղները՝ մի գոյն ու հասունութիւն։ Կային դրանց մէջ մարդիկ, որոնք հետաքրքրւում էին հասարակական խնդիրներով կամ ազգային կեանքի բաղդով. բայց դրանք էլ հետաքրքրւում էին այն չափով, ինչ չափով որ հետաքրքրութիւնը գալով նա տեսաւ իրեն ամբողջ ամայութեան մէջ, հեռու սիրած ու գուրգուրած նպատակներից....

Ձմռարիտ է, նրա դրութիւնը այժմ աւելի ապահով էր քան առաջ. նա վաստակում էր իւր հացը արդար քրտինքով, կարօտութիւնը այլ ևս չէր սպառնում նրան, նա հետզհետէ ծանօթանում էր առևտրական աշխարհի նշանաւոր մարդկանց հետ, իսկ այդ ծանօթութիւնը կարող էր ապահովել նրա ապագայ բաղդի յաջողութիւնը, այսու ամենայնիւ այս բոլոր առաւելութիւնները չէին փակում այն անջրպետը, որ իւր սիրած, գաղափարական աշխարհը բաժանում էր առևտրական նիւթապաշտ աշխարհից, որ օր ըստ օրէ տեսնը գիտակցութեան բերելով իրեն՝ թոյլ չէր տալիս նրան սիրել այդ ասպարէզը։

Արդարև, գաղափարական աշխարհի մէջ էլ նա դեռ գրաւիչ ու սիրելի ոչինչ չէր տեսել։ Առաջին անգամից իսկ այդտեղ չրջապատել էին նրան ստութիւն, կեղծիք, խաբեբայութիւն և այլն, բայց նա համոզուած էր, որ դա իւր երևակայած աշխարհը չէր հոգած, որ նա սխալուել էր խարեբաների մի չրջան մանելով և այդ չրջանը գրական ու ազգային աշխարհ ճանաչելով։ Նա հաւատում էր, որ իւր երևակայած գաղափարական աշխարհը կայ, գոյութիւն ունի և որ ինքը մի օր կարող է հանդիպել նրան։ Նա հաւատում էր, որ այնտեղ ապրում ու գործում են դեռ ազնիւ և առաքինի մարդիկ, որոնց հետ մի օր նա կարող

է ծանօթանալ....

Իսկ ինչ առևտրական աշխարհին էր վերաբերում, նա այժմ արդէն իւր աչքի առջևն էր։ Երիտասարդը նրան տեսնում, քննում, ուսումնասիրում էր, և որքան որ աւելի ժամերնում ու լիափանցում էր նրա էութեան և գաղտնիքներին, այնքան աւելի հակակրում և արհամարհում էր նրանից։

Եւ իրաւ, ինչ ձգտում և ինչ աշխատասիրութիւն ունէր գործատէր առևտրականը և ինչ՝ նրա ծառայողները։

Առաջինը մտածում էր չարունակ փող վաստակելու, գանձ դիզելու վրայ։ Այդ նպատակին հասնելու համար նա ոչ միջոցների մէջ էր խարխափում գնում և ոչ աշխատութեան ծանրութիւնից էր փախչում։ Վաղ առաւօտից սկսած մինչև մութ երեկոյ անընդհատ գործում ու տքնում էր և իւր հետ միասին աշխատեցնում ստորադրեալներին։ Օրերին յաջորդում էին շաբաթները և ամիսներին՝ տարիները. առևտրականի կեանքը բոլոր այդ ժամանակ հոսում էր միատեսակ։ Փող, հաշիւ և շահ. ահա միակ առանցքը, որի շուրջը պտտում էին նրա խելքն ու միտքը, խօսքն ու զրոյցը, սիրտը և հոգին։ Առևտրական մարդուն հասարակական խնդիրները չէին գրաւում, ազգային նորութիւնները չէին հետաքրքրում, գաղափարական մտքերը չէին ոգևորում... Այդ բաների վրայ նա ծաղրով կամ արհամարհանքով էր նայում. իսկ երբ տեսնում էր, որ դրանցով զբաղւում են իւր չափած

ՔՐՈՆԻԿՈՆ

Մարտի 1-իյ «Նոր-Դար»-ին բաժանորդ գրուողը վճարում է 8 րուբլի 50 կոպ.։

Ներքին գործերի մինիստրութիւնը առաջարկել է բոլոր նահանգների կառավարիչներին անյապաղ ուշադրութիւն դարձնել բոլոր քաղաքների, գիւղերի և զանազան տեզերի մաքրութեան վրայ։ Առանձին ուշադրութիւն է դարձրած Աստրախանի, Բագուի և Անդրկովկասի և Դօնի չրջանի զանազան քաղաքների վրայ, որպէս վարակիչ ցաւերի մշտական բոյների վրայ։

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ.—Խմբագրութեանս ուղ հասած մի կարևոր նամակում գրուած է.

Հինգերորդ դարու մեր սուրբ հայոց հայրապետների խնկելի տօնը այստեղ կատարուեց շատ անչուք կերպով։ Ուսումնարանում ոչինչ չկար. լաւ էր, որ եկեղեցում եղածն էլ բոլորովին չչինէր։ Երկու սեռի երեխաներից բազկացած երգեցիկ խումբը շատ անհերգաչնակ էր երգում, եւևի ձայնագրութեան ուսուցչի հիւանդութեան և խմբի այդ ս. պրոյ կառավարչի անձեռնհասութեան չնորհիւ։ Որքան եղաւ մեր զարմանքը, երբ պատարագից յետոյ, հոգեհանգստի ժամանակ, հոգեպղծ չարականից յետոյ մի կին, ծոր կանգնած էր աշակերտուհիների եւև, առանց պատշաճաւոր իշխանութիւնից թոյլտուութիւն խնդրելու սկսեց solo երգել մի երգ *)։

*) Հետաքրքրիր էր իմանալ ինչ երգ է եղել։ Խմբ.

քրքրում է բարեպաշտ ժամաւորը եկեղեցու զրանը մաքրացող աղքատի վիճակով։ Նրա ցնցոտիները և ողորմելի կերպարանքը չարժում են բարեպաշտի գութը և սա չի յաւելուածոյ իբրև մի սև փող դնելով նրա ափումն հեռանում է, կարծելով թէ իւր բարոյական պարտքի մեծագոյն մասը կատարեց։ Այսպէս էին վերաբերւում դէպի հասարակական բաղդը՝ լաւագոյնները առևտրականներից. իսկ վատթարագոյնները այդ բաղդով հետաքրքրութիւնը արդէն յանցանք էին համարում։

Ինչ սրանց սատրապութիւններին էր վերաբերում, առևտրական աշխարհի այդ չարժուն, եռանդուն և կենդանութեամբ լի դասակարգին, դրանք նոյնպէս գրաւիչ ու սիրելի կողմեր չունէին։ Այդ երիտասարդ մարդիկ, արդարև, շատ կէտերում զանազանւում էին գործատէր վաճառականից, նրանք աւելի դիւրազգաց, կարեկցող և բարիք գործելու դիւրապատրաստ էին, բայց այս առաւելութիւնը իսկապէս մի թերութիւն էր նրանց համար, որովհետև առաջ էր գալիս ոչ թէ գիտակցութեան զօրութիւնից, այլ բնաւորութեան թուլութիւնից։ Իսկ այդ թուլութիւնը նկատւում էր նրանց ամեն մի քայլափոխում։

Այդ երիտասարդները արտաքուստ ուրիշ մարդ էին ներկայանում, ներքուստ՝ ուրիշ։ Նրանք հլու և հնազանդ էին գործատիրոջ, ինչպէս խաղեմ որդիները իրենց հօրը. նրա պատուէրները կատարում էին խնդրով

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ինչպես հայտնի է, Ռուսաստանի հայ գաղութների մեծ մասը կազմում են Ռուսաստանի հայ վաճառականները, որոնք ունեն իրենց մշտական հաստատությունները Ռուսաստանի տարբեր քաղաքներում։ Ռուսաստանի հայ վաճառականների մեծ մասը զբաղվում է ներքին առևտրով, ներմուծում է Ռուսաստան եվրոպական ապրանքներ և արտահանում է Ռուսաստանից հումք։ Ռուսաստանի հայ վաճառականների մեծ մասը ունի իր ներկայացուցիչները Եվրոպայի տարբեր քաղաքներում, որոնք գնումներ են անում նրանց համար։ Ռուսաստանի հայ վաճառականների մեծ մասը ունի իր ներկայացուցիչները Եվրոպայի տարբեր քաղաքներում, որոնք գնումներ են անում նրանց համար։ Ռուսաստանի հայ վաճառականների մեծ մասը ունի իր ներկայացուցիչները Եվրոպայի տարբեր քաղաքներում, որոնք գնումներ են անում նրանց համար։

ջին անգամ ականատես եղաւ իւր նը-
մանին, մերձաւորի անդարձ անկման,
այն օրից, երբ Ձաղկաբերիի ծառը
մերկացաւ՝ թափելով իւր թարշամած
տերևները,—տեսաւ մարդը. սև թա-
խիծը թանձր վարագոյրով պատեց
նրա սիրտը, և նա անճարացած, կախ
ընկաւ այն յոյսի փեշից՝ թէ գալու է
մի օր, ժամանակ, երբ աւելի գիտուն
մարդիկ մահուան դէմ դեղ են գտնե-
լու, և յաւիտեան ապահովելու են ի-
րեն աշխարհիս երեսին։

Բայց մարդ յաւիտենականութեան
հետ ուզում է երիտասարդ էլ լինել։
Նրա սիրտը կոտրւում է, գոյնը շրջւում,
երբ աչքի տակով անմեղ նայուածք
ատամնաբուժի, ծնկները թուլացած,
մէջքը կորացած, աչքի լոյսը թաց-
ծերունու վրայ... Ինչպէս նոր շինու-
թեան պատի մէջ երևացող ճաքը նրա
ամլութիւնը կասկածանքի տակ է
գնում, այդպէս էլ առաջին անգամ
մարդուս մազերի մէջ սպիտակին տուող
երկու մազ խախտում են նրա հաւատը
դէպի իւր սեռական մարմնի չէնքը։
Այդ երկու հատիկ մազը թէև լուռ,
բայց ազդու ոյժով յայտարարում են,
թէ կեանքն արդէն մօտեցել է ծե-
րութեան սահմանին, և որ այն՝ ինչոր
երիտասարդութեան հասակին էր պատ-
կանում, տեղի պիտի տայ այսուհետև
մի պաղ ու թոյլ կեանքի, որը, հե-
տզետէ զիջողութիւններ անելով մա-
հուան, իւր իշխանութեան տակ էլ
բան չի թողնելու, այնքան՝ մինչ դա-
դարելու է գոյութիւն ունենալուց։

Ծերութեան հասակին օգնութիւն
հասնելու մտքով էր, որ միջնադա-
րեան ալքիմիկոսները մտքի խորչե-
րում կուչ եկած, ազօտ լոյսի ներքոյ՝
խորհրդաւոր ուշադրութեամբ բոլսերից
հեղուկներ էին քամում ու զանազան
խառնուրդներ անում, յուսալով որ այդ
խառնուրդներից մինն ու մինը գուցէ
կարող կլինի դիմադրել մահուան՝ յա-
ւիտեան հալածելով նրան մարդու ե-
րեսից... բայց մահուան դէմ դեղ
գտնելու փոխարէն ուրիշ բաներ
գտան։ Անցաւ նրանց գարը։ Ալքի-
միկոսների գործը չարունակեցին միւս-
ները, միայն՝ այլ ճանապարհով։
Սրտացին միստիքներ, մարդիկ, որոնց
ճակատից բարձրահասեայ լեռնակա-
տարների նման մտայլը չէր անցնում։
Այս մարդիկ տրամաբանական ոչինչ
կապ չգտնելով կեանքի սկզբնաւորու-
թեան ու նրա վախճանի մէջ, բար-
կացած բողոքներ էին արձակում,—ձեմ
դէմ՝ իրենք էլ չգիտէին—«Եթէ մարդս
ծնուել է ապրելու համար, ինչու հա-
մար է մահը, իսկ եթէ մահ կայ՝ ծ-
նուելն ինչու համար էր»,—բացագան-
չում էին նրանք, յարձակուելով ծնու-
թեան «ըստ երևոյթին» անիմաստ
կարգադրութեան վրայ։ Բայց այդ
մարդկանց բողոքները միայն բողոք
մնացին, և Վօլտերի պէս մարդը կեան-
քի մասին դատողութիւններ տալով՝
աւելի և՛ չիմացուեց՝ կորցնելով գլուխն
այդ հարցի մէջ։ Սակայն, չնայելով ոչ
մի տեղից պատասխանի ձայն չէր գալի՝
չվհատուեցին մարդիկ, չհանգստացան,
—այն աստիճան մօտ է հարցը մեր
սրտին։ Այժմ երևում է հարցն ուրիշ
կերպ են դրել։ Ընդունելով, որ մահը
ծնութեան անփոխելի, մշտական օ-
րէնքներից մինն է, չէ կարելի որ-
դեօք— հարցնում են—ձգտել որոշել
կեանքի սահմանը, այսինքն՝—ապա-
ցուցանել՝ որ մարդուս վիճակուած է
իւր ծննդեան օրից այսքան, կամ այն-
քան ժամանակ ապրել, օրից դէննդ,
ինչ միջոցների էլ նա գիմի, չէ կարող
իւր կեանքին մի բան աւելցնել, ո-
րովհետև կենսական ոյժը միայն մի
որոշ ժամանակի համար կարող է բա-
ւականանալ։

Ահա այս հետաքրքիր հարցովն է
զբաղուել իւր հրապարակական դասա-
խոսութեան մէջ Ղազանի կայսերա-
կան համալսարանի պրոֆեսսոր Դօհել,
որի դասախոսութիւնն առանձին ըն-
չիւրով էլ լոյս է տեսել այս վերջերում
«предѣлъ человѣческой жизни» խո-
րագրով, որպիսին և կրում է մեր յո-
դուածի վերնագիրը։

II.

Նախ քան մարդուս կեանքի սահ-
ման որոշելն ասենք՝ 1) ինչ բան է
կեանքը, և 2)՝ ինչ օրէնքների է են-
թարկուած նա։

Ֆրանսիացի ականաւոր բնաբան Բի-
շառդ կեանքի համար ասում է. «la
vie c'est la mort» —կեանքը հենց ին-
քը մահն է, և՝ հակառակ. «la mort
c'est la vie»—մահը նոյն է կեանք։
Թէև կեանքի մասին տուած այս տե-
սակ որոշումն իսկապէս որոշում չի կա-
րելի համարել, ասում է Դօհել, բայց
չպէտք մոռանալ, որ նա յայտնի և
լուրջ նշանակութիւն ունի, քանի որում
ցոյց է տալիս, թէ ինչ աւելնչութիւն
կայ կեանքի ու մահուան մէջ, և հա-
կառակ։

Դրա նման մի որոշում էլ Շիլլերն է
անում. «Քանդւում է հինը, փոխուում է
ժամանակը և աւերակների վրայ նոր
կեանք է ծլում», ասում է նա։ Մի ու-
րիշ—Ֆրանսիացի բնաբան՝ հանճարեղ
Բիշը այսպէս է ասում. «La vie est
l'ensemble des jonctions, pui resistent
a՝ la mort»—այսինքն՝ կեանքն այն
տեսակ կատարումների ամբողջութիւն
է, որոնք գործում են ընդդէմ մա-
հուան։ Վերջապէս անգլիացի փիլիսո-
փա Սպենսերը պնդում է, թէ կեանքը
կենդանաբանական կազմուածքի ներ-
քին յարաբերութիւնների կողմից ար-
տաքին յարաբերութիւնների հետ մըշ-
տական յարմարուելու մի գործունէու-
թիւն է,—որ դա մշտապէս երկու հա-
կադարձ կողմերից իրար դէմ գործող
սկզբունքների մշտնջենական մի կռիւ
է։ Այս բոլոր որոշումներից հասարակ
լուսով այն է դուրս գալիս, թէ մի
ոյժ ներսից պահպանում է կազմուած-
քը, այն ինչ ուրիշ, մի հակառակ ոյժ,
դրսից աշխատում է քայքայել նրան։

Ինչ ասել կուզի, որ այս տեսակ ո-
րոշումներով — բացագրութիւններով
կեանքի էութիւնը, նրա ինչ լինելը
դեռ ևս չի պարզւում, և մեզ համար
տակաւին մոլորն է մնում, թէ այն ինչ
իրար հակառակ ոյժերը են, և ինչու
նրանք իրար դէմ գործելիս պիտի լի-
նեն։ Այս հարցի իսկական պատասխանն
այն ժամանակ կըգտնուի, երբ արևի
պէս պայծառ կերևի մեր առաջ, թէ
իսկական մարդուս երկրային կեանքի
նպատակն ինչի՞ մէջ է կայանում։
Բայց այդ հարցին մինչև այժմ պա-
տասխանող չի եղել, և եղած պա-
տասխանները կեանքի միայն մերձա-
ւոր նպատակն են որոշելիս եղել։ Հարցի
իսկական և միակ պատասխանը գուցէ
վերապահուած է մեզանից թանձր
խաւարով ծածկուած ապագային,—մեզ
համար այսքանն էլ է բաւական,—ինչ
որ կեանքի մասին լսեցինք գիտնա-
կաններից։ Ուշք դարձնենք միւս հար-
ցի վրայ.—ինչ օրէնքների է ենթար-
կուած կեանքը, ինչպէս է յարատևում
նա։

Դօհել կեանքի յարատևութիւնը բա-
ցատրելու համար երկու մատչելի օ-
րինակ է բերում։

Գնդակը թնդանօթից նետուելիս
յայտնի է, թէ ինչ ոյժով է թըռ-
չում։ Այդպիսի մի չարժողութիւն
զոյացնելու համար անհրաժեշտ է
որոշ ոյժ, վատնուի յայտնի քանա-
կութիւն, որ բանիուելիս կարո-
ղանար յայտնի արագութեամբ չար-
ժողութեան մէջ գցել թնդանօթի գըն-
դակը։ Այդ տեսակ մի ոյժ ձանապար-
հին ոչինչ արգելքի չհանդիպելով, պի-
տի որ նախկին արագութեամբ յա-
ւիտեան չարժուէր։ Եթէ որ գնդակը
թռչելիս հանդիպում է ուրիշ գնդակի
կամ առարկայի, զարկուելով նրան,
փոխանցութեան է ենթարկում իւր ըս-
կզբնական արագութիւնը.—կամ թո-
ղորովին զադարում է գնդակի թռիչքը
և կամ յայտնի չափով թուլանում. բայց
դրա փոխարէն արգելատեղի եղող ա-
ռարկան է սկսում չարժուել՝ նոյնած
իւր ստացած գործի ոյժին, այնպէս
որ՝ թնդանօթի չարժուելը կամ մա-
սամբ և կամ ամբողջովին արգելատեղի
եղող առարկայի չարժման է փոխանց-
ուում։

Եթէ որ չարժուող գնդակը մի կարգ
արգելքների է հանդիպում, որոնք թու-
լացնում են նրա չարժողութիւնը, գըն-
դակը վերջ ի վերջոյ գալիս է առա-
ջուայ խաղաղ դրութեան, իսկ գնդակի
թռիչքին արգելք եղող այն մի կարգ
առարկաները ընկնում են չարժողու-
թեան մէջ, այն ոյժով որպիսին հա-
ղորդուում է նրանց գործի միջոցով,
այնպէս որ՝ թնդանօթի գնդակի թռ-
ռիչքին արգելք դնող մասնաւոր ոյժե-
րը եթէ գումարենք, կստանանք այն
սկզբնական ոյժը, որ գնդակը թնդա-
նօթից նետուց։ Եւ այսպէս, թռիչքի
արագութիւնն ու նրա յարատևութիւ-
նը կախուած են՝ ա) սկզբնական չար-
ժողութեան մէջ գտած գործի ոյժից և
2) չարժման դէմ գրած ոյժի աստի-
ճանից։

III.

Այս օրինակից երևում է, ասում է
Դօհել, որ կան մի կարգ չարժողու-
թիւններ, որոնց սկզբնապատճառը
նոյնպէս չարժողութիւնն է եղել։ Այս
օրինակում վատոզի առնիլը (բանկուի-
լը) առաջացրեց գազերի չարժում, գը-
րանք այժմ գնդակի չարժման, նա
էլ իւր կողմից թռիչքին արգելք եղող
առարկաները գցեց չարժողութեան
մէջ. միայն վերջին չարժումը հանգըս-
տացրեց գնդակը։ Եւ այսպէս, գնդակի
չարժութիւն ասնեցաւ ինչպէս սկիզբ,
այնպէս էլ՝ վախճան, որը իւր կողմից
ազդեաւ նոր չարժման։

Շարժման և հանգստութեան նման-
ութիւն կարող են բերել բոլսերի սեր-
մերը, որոնք բարելաչող հանգամանք-
ներում հանգիստ՝ անգործ գրու-
թիւնից չարժման դրութեան, գոր-
ծունէութեան մէջ են բնկնում։
Այդ սերմերն իսկապէս կեանքի
պատկերը՝ քնից—մահուանից զարթ-
նելու նշանն են տալիս։ Անզգայելի
փոստերի վկայելով փակուած տեղ
գարից աւել մնալուց յետ անգամ գոր-
նահատիկները աճելու ընդունակու-
թիւնը կորցրած չեն լինում։ Եգիպտա-
կան բուրգերում մօտ 4000 տարի մը-
նացող ցորնահատիկները խոնաւ գետ-
նին պահ տալուց յետ կենդանացան
և մեր ոյժմեան ցորնահատիկների
նման հասկեր գցեցին, հատիկներ
տուին, ու այդ հատիկներն էլ ընդու-
նակ եղան նոր կեանքի պատճառ լի-
նելու։

Այդ տեսակ—իրկար գարեր մեռած
մնալու և նորից յարութիւն առնելու
ընդունակութիւնը՝ մեռնակ հացահա-
տիկներին չէ տուած. գրիչ բոլսերի
սերմերն էլ ունեն այդ յատկութիւնից։
Մօտ ժամանակներումս—չարունակում
է Դօհել—գիտնականների արած փոր-
ձերից երևաց, որ եթէ ստորին կարգի
մի տեսակ սպրդա—և խեցգետնանը-
ման կենդանիներից եթէ վերցնես ու
այնպէս չորացնես, որ փոշի դառնայ
և այդ դրութեամբ պահես,—տասե-
ներ անցնելուց յետ էլ այդ փոշին ե-
թէ թաց անես,—այդ կենդանիները
էլի կըկենդանանան։ Այդ բոլորը ցոյց
է տալիս, որ եթէ բոլսերի սերմերը և
մեր աչքին ցորնահատիկները նման

ԼԿ «ՔՆչ էք կամենում», չարագործը գրպանից հանեց տարճանակը և արձակեց. առաջին գնդակը մտաւ փորը Ֆախ կողմից մի փոքր վեր, երկրորդը սենեակի դրան վերի կողմը։ Այդտեղ կանգնած սրապահ կուրծքը բռնից մարդասպանին, քաղաքագլուխը կարողացաւ քաշուել իւր կաբինէտը և ընկաւ բազկաթոռի վրայ։ Բժշկական առաջին օգնութիւնը հասցնելուց յետոյ, Ալէքսեեվը ուշքի եկաւ։

Հաւատացնում են Թէ չարագործը խելագար է։ Կառքերով բարձրաստիճան մարդիկ չտապում են քաղաքային տունը։ Հիւանդը պարկեցրած է առ այժմ կաբինէտում։ Գազ. Խորհուրդի նիստը յետաձգուած է։ Օպերացիան կատարում են աւելնալաւ անդամահատները։

ՎԻՆՆԱ. Պրօֆեսսոր Բիլրօթը մեկնում է Սօֆիա պրինց Ֆերդինանդի գանգից հեռացնելու հաւաքուած ժամը, որ խիստ բորբոքումն է առաջացրել

ՊԱՐԻԶ. Դահումէից փախած երբեմն Թագաւոր Բէգանցինը պատրաստւում է փրանսիացիների դէմ յարձակուելու։ Բէգանցինին օգնում են գերմանացիները և անգլիացիները, որոնց գաղթատեղիները Դահումէի սահմանին կից են։

Պանամայի գործը. երդուեալները յանցաւոր համարեցին՝ Պանամայի ընկերութեան գործակալ՝ Լէսէպսին, հասարակաց շինութիւնների երբեմն մինիստր՝ Բայօին և դրանց միջնորդ՝ Բլոնդէնին, իսկ մեւս մեղադրեալներին՝ անմեղ։

—

Մարտի 1-ին երկրորդ ներքին փոխադրութեան տոմսերի վիճակահանութիւնը 500 րուբլի տարել են հետեւեալ տոմսերը.

№№ սերի.	№№ տոմսի.	№№ սերի.	№№ տոմսի.	№№ սերի.	№№ տոմսի.
7404	1	19767	31	13743	2
9536	48	4603	9	4065	17
12562	23	19080	40	4111	11
19113	50	12532	38	17978	50
19021	14	8748	48	14968	48
100	48	4988	23	13033	49
4758	40	6863	40	7419	35
13052	21	4799	34	2365	32
15305	2	18235	40	18611	29
2728	46	13634	15	8897	15
5797	39	6802	12	9032	26
12329	9	2421	25	3022	12
7896	30	5241	32	7412	22
1894	22	18337	24	16998	1
4531	7	12216	35	13901	41
1748	37	52	1	8153	35
14288	7	18882	35	3527	7
4059	22	12637	21	8301	18
2659	20	3262	46	19255	7
15272	31	8755	6	5667	1
7444	2	8809	22	14179	28
19160	23	3542	22	4121	32
7524	36	2202	41	13396	41
12703	50	427	5	3747	6
6371	25	3305	21	7002	28
11537	38	11041	37	10156	18
4309	48	18311	25	9911	1
8790	49	11648	6	13064	9
13836	8	7793	16	10483	42
5173	46	1311	35	3768	10
7745	10	9652	34	944	34
8964	38	6653	13	7225	15
13188	19	19609	14	11635	17
17308	38	1704	35	15640	47
12630	29	14591	38	847	24
17201	13	13294	1	6791	31
8778	8	18943	31	2715	13
9859	21	12689	14	1764	13
3004	16	6992	16	13158	34
18620	18	13957	14	11758	41
15569	12	17674	26	4815	50
6762	18	19936	42	9678	45
13270	41	4642	20	11803	8
19329	27	18077	19	11733	30
9092	11	6096	40	17594	48
3134	13	4614	48	11932	37
12090	41	16841	4	9660	21
5983	12	6788	15	19210	4
11657	33	14336	47	5185	2
18750	47	1973	44	9093	27
4690	47	16278	50	15687	22
15817	32	14463	5	15064	31
9840	12	4413	38	12253	12
17449	3	12614	27	1535	16
7946	37	19680	9	2568	35
8771	7	16930	27	4588	16
2842	43	9575	37	19873	38
3632	7	19348	16	6685	8
764	19	6132	10	19137	48
13816	44	7792	18	14259	37
9166	37	2742	40	8532	31
14713	25	11576	25	6477	32
2768	15	1357	21	14819	24
13089	3	717	39	3276	43
6827	15	1558	21	6152	4
16871	5	13543	6	13887	43
1354	13	19065	6	636	35
10950	26	9203	21	14240	20
2063	49	13205	13	8756	31
3313	27	2185	6	2022	35
15146	41	11742	45	1734	35
15000	2	18208	47	1148	8
3096	5	1591	16	12111	46
11273	26	1245	32	4551	48
12761	45	11256	49	15016	22
8325	23	15950	3	17033	9
1774	23	2124	12	4663	11
10261	40	16200	35	12724	33
16802	47	7033	33	12061	4
16637	31	16843	32	8766	19
6599	1	12806	41	4741	41
410	44	8546	8	14037	8
11601	23	14161	41	5810	41
6161	48	13764	28	6623	1
3381	34	12409	12	10239	25
3034	14	4818	43	7750	38
5386	34				

Վիճակահանութեան ժամանակ հանգած սերիայի համարները։

12096, 611, 18383, 15187, 15815, 2490, 15415, 7875, 5251, 9905, 14504, 11301, 3842, 1553, 3536, 9602, 13005, 18583, 8128, 15689, 2532, 18062, 3333, 3289, 2737, 11464, 3785, 18352, 1524, 18744, 10625, 14143, 8952, 7256, 16695, 2057, 3567, 3037, 16413, 12726 14391, 8187, 18407, 11833, 17359, 16055, 8823, 13611, 4951, 14747, 18088, 12023, 12321, 6788, 468, 9816, 15745, 13470, 5487, 13830, 13407, 4349, 9477, 7879, 18331, 5273, 16718, 12982, 10562, 2498, 8497, 15064, 8176, 8843, 19362, 16585, 3514, 5063, 16686, 373, 11826, 16977, 8307, 9290, 137, 14210, 2189, 12840, 10544, 4976, 6411, 6896, 7885, 649, 11798, 12388, 12049, 6973.

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Պոստային կառքերի երթեւեկութիւնը Ռազմա-վիրական տրակտի վրայ։

Թէճլուխ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղեւորւում է առ. ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, վերադարձում հասնում է հետեւեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7½-ին։

Ծօթ հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղեւորւում է կէս օրից յետոյ ժամը 3-ին, առանց գիշերելու հասնում է հետեւեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7-ին։

Վերադարձող հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղեւորւում է առ. ժամը 8½ն, գիշերում է Մլէթի կայարանում, Թէճլու է հասնում հետեւեալ, օրը կէս օրից յետոյ, ժամը 7½-ն։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղեւորւում է կէս օրից յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու հասնում է հետեւեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7-ին։

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիսից Բաքում գալիս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաքում հասնում է ե. րեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Պոստային գնացքը Թիֆլիսից Բաղու գալիս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 20 րոպ.։

Պոստային գնացքը Թիֆլիսից Բաքում է երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաքում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաքումից Թիֆլիս գալիս է առաւօտեան ժ. 9-ին 45 ր. և Թիֆլիս հասնում է երեկոյեան ժ. 9-ին 52 ր.։

Պոստային գնացքը Բաքումից Թիֆլիս գնում է գիշերուայ ժ. 11-ին 25 ր. և Թիֆլիս է գալիս ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Պոստային գնացքը Բաղուից Թիֆլիս գալիս է գիշերուայ ժ. 11-ին 10 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(М.) 10—1

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՇՈՒԱՊԱՀ

որ գիտէ էլէնտէն խոլոխոն հաշուապահութիւնն և ունի վկայական Մոսկուայի գրաւոր հաշուապահութեան դասատու պ. Լիլիէնտալից, որանում է հաշուապահի կամ հաշուապ. օգնականի պաշտօն։ Հասցէն՝ Эриванъ, Степанносъ Теръ-Степанянцъ.

2—1

ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ, ՄԱՏԻԿՕԻ

(Iujcetion au Matico)

Թարմ ած է Ռուսիայում

Պատրաստուած է Մատիկի տերևներից՝ պերուվինեան բոյսի։

Պահիսան է Պարիզում։

8, rue Vivienne, Paris

(М.) 17—6.

Մամուլի տակ է և շուտով լոյս կտեսնէ մեր թարգմանութեամբ

ՎԻԼԱՄ ՋԱՆՆԻՆԳ

Նրա կեանքը և գործերը

Գինը նշանակուած է 40 կոպ.։ Տպագրութեան համար պատրաստ են մեր հետեւեալ աշխատութիւնները.

1. Վազի մշակութիւնը ընդարձակ պատկերազարդ ձեռնարկ։
2. Դերբենտի այգեգործութիւնը։
3. Մեղուապահութիւն։

Կ. Կ. Մելիք Շահնազար.

20—18.

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Գինն է 50 կոպէկ.— Ճանապարհածախսով 65 կ.։

կազմեց Մ. ԱՐԵՂԵԱՆ

Վաճառւում է «Նոր-Դար»-ի խմբագրատանը և «Կեդրոնական գրավաճառանոցում։

ԱՏԱՂԶԱԳՈՐԾ

Ընդունում է ամեն տեսակ ատաղձագործական, պարկետի, տոկարական և շինութեան վերաբերեալ պատուէրներ։ Դվօրցովայա փողոց, Թիֆլիսի ազնուակ. բանկի գալիրէյում. № 142, Յարութիւն Ստեփանեան Յալուէթիւնեայ։

(408) 15—10

ԲԺՇԿԱՊԵՏ ՔՈՒՉԱՐԵԱՆՑ

ընդունելութիւնը ցերեկուայ ժամը 8-ից մինչև 12-ը և երեկոյեան ժամը 6-ից մինչև 8-ը, վեներականաշուի և ականջի հիւանդութիւնների համար։

Սալալէ, Սպովոյա փ., սեփ. տուն։

ՆՈՅՆ ՏԵՂՈՒՄ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՎԱՆՆԱՆՈՑ

(Բաղնիք) շքեղ և առողջապահօրէն կահաւորուած։ 50—38

ՄԱՐԻՄ ԹՈՎՄԱՍԵԱՆ, ԳԱՐԻԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ ՁՈՆԵԱՆՆԵՐԸ և ԿԱՏԱՐԻՆԷ ՍՏԵՓԱՆԵԱՆ ՓԻՏՈՒՄԵԱՆԸ յաւօք սրտի յայտնելով առաջինը իբր ամուսնու և մնացածները իրենց Հօր՝

ՍՏԵՓԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐԵԱՆ ՁՈՆԵԱՆԻ

յանկարծահաս մահը՝ խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեան հանդիսին շաբաթ, մարտի 13-ին, Պօլիցեյսկի փողոց, առն Նլիօզովի, № 39-ը՝ որտեղից Չիգբաշէնի եկեղեցին կըտարուի հանգուցեալի մարմինը։ Աճիւնքը կըլինի հինգշաբթի 11-ին և ուրբաթ 12-ին մարտի երեկոյեան ժամը 7-ին։

(412) 2—1

Իմ աշխատութիւններս մեծ մասամբ սպառուած են. մնացեալները հետեւեալներն են, որ այսուհետեւ կարելի է ստանալ միայն ինձանից.

ՀԱՑԻ ԽՆԴԻՐ	— 80 կ.
ՇԱՀԻՆ	1 ր.
ՑԵՑԵՐ	1 ր.
ԲՂԴԷ	1—20 կ.
ՍԿԻԶԲՆ ԵՐԿԱՆՑ	1—20 կ.
Փոստի ծախք իւրաքանչիւր գրքին	10 կ.

Մեծ քանակութեամբ առնողներին 30% զեղչ կըլինի։

Վերջին աշխատութիւնս նոր լոյս տեսաւ տպարանից և շուտով կուղարկուի պ. պ. բաժանորդներին, ուստի խնդրեմ այն յարգոյ պարոններին, որոնց մօտ կան բաժանորդագրութիւնները շուտափոյթ վերադարձնել։

Հասցէս՝ Թիֆլիս, Ներսիսեան դպրոցից. Тифлисъ Армянская Семинарія.

Պերճ Պաւշեանց.

(Խ.) 20—8

ԿԵՆՏՐԻ ՍՊԻՐՀՈՎՈՒԹԵԱՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Պետերբուրգ Նեւսկի պր. № 3

Ռուսիայում ընկերութիւնը բաշխչագոյն հայլաւութիւնն է տուել 1889 թ. յունիսի 2-ին։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ վրայ կառավարչական մշտական երեսն հսկողութիւն է նշանակուած։ ՈՒՐԲԷՆ ընկերութիւնը 1890 թուին Ֆրանսիայում և Սերսայի մեւս պետութիւնների մէջ 50,000,000 ֆրանկի ապահովութիւն է արել։

ՈՒՐԲԷՆ (L'URBAINE)

Օգուտին մասնակցելու փոխարէն «Ուրբէն» ընկերութիւնը ոչ մի ընթացիկ պրեմիա չէ վերցնում կեանքն ապահովուողի հիւանդութեան դէպքում և, չնայելով դրան սոլիսը պահում է իւր այժը.

Գլխաւոր ներկայացուցիչ, Անդրկովկասի, Անդրկասպեան և Թուրքեստանի երկրների, նոյնպէս և Բուխարայի համար է Պոլակ և Ընկ. առևտրական տունը Թիֆլիսում. Վելիամինովսկայա փողոց, տուն № 10, III գիմնազիոնի հանդէպ։ Գլխաւոր վերատեսուչն է ՄԻԽԱՑԻ ՕՍԻՊՈՎԻՉ ՉԻՃԻԿԸ, կանոնադրութիւնը և զանազան բացատրութիւնները կարելի է ստանալ Բաքումում, Բաքւում, Սմբղանդում—«Պոլակ և ընկ.» գրասենեակներում և ընկերութեան բոլոր գործակալութիւններից։

26—4

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՖՐՈՆԱԿԱՆ

ԴԷՊՕ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ

Մոսկուայում Արբատի Նոպրոնի և Աբրահոսիեւսկոյ ընկերութեան,

ՌՈՅԱԼՆԵՐ ԵՒ ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

Պետերբուրգի գործարանների՝

Կ. Մ. ՇՐԵԴԵՐԻ—արքունի գործարան, ԵՂԲ. ԴԻԴԵՐԻԽԻ և ՍՄԻԴՏ ՎԵԳԵՆԵՐԻ։

Ինչպէս լիշեալ գործարանների միակ գործակալ Կովկասում, Թիֆլիսում, ես իմ երաժշտական դեպոյում ունիմ մեծ քանակութեամբ ռոյալներ և պիանոհարներ։

Զուռնաներ, ալտեր, Վիոլոնչելներ, կոնտրբասներ, ֆլեյտաներ, ֆագոտներ, լիրեր, նաթեր և երաժշտական գործիների բոլոր պարագաները առաջարկում եմ մեծ քանակութեամբ։ Գները գործարանային։ Վաճառում եմ հատով և մեծ քանակով։ Գները կարելի է վճարել մաս առ մաս։ Օտարերկրացիների պահանջները կատարում են անմիջապէս։ Գնած իրերն ընդունում են ուղարկելու տրանսպորտային ընկերութիւնների ստիպագնով։

Հասցէն՝ Дворцовая ул. д. Тиф. Двор. Зем. Банка, музыкальное депо Б. Мириманяна

(317) 25—16

Дозволено цензурою. Тифлисъ 10-го марта 1893 г.

Տպարան «Կաւկազ»-ի

Типографія „Кавказъ" Гол. пр. домъ Читахова.